ռով, որ հայե՛ր են *եւ* ոչ վրացիներ»:

Ի՞նչ «աննշան» պատճառ: Հապա, դուք, ամէն կարգի Օրջոնիկիձէներ, փորձ արէք համոզելու Թիֆլիս քաղաքի ու գաւառի (չասելու համար՝ Կախէթի) վրացի բնակչութեանը, միանալու Հայաստանին — շատ աւելի մեծ իրաւունքով, քան դուք Ջաւախեցիին էք պահում Վրաստանի սահմաններում. չէ՞ որ Թիֆլիս քաղաքում եւ գաւառում հայ տարրը բաղդատական մեծամասնութիւն է կազմում, աւելի, քան վրացիները: Ենթադրենք մի րոպէ, որ դուք ցուցահանեցիք այդպիսի համարձակութիւն: Փորձեցէ՛ք հապա, մերժման դէպքում (որ անկասկածելի էր ի հարկէ) ձեր աննման տրամաբանութեամբ չպրտել նրանց երեսին.

«Գայթակղելի է միանգամայն, որ Խորհրդային հանրապետութեան (չէ՞ որ Հայաստանն էլ այդպիսին է) քաղաքացի չեն ուզում դառնալ միայն այն պատճառով, որ վրացիները են, եւ ոչ հայեր»:

Ի հարկէ, ոչ թէ իրականութեան, այլ երազի մէջ անգամ չէիք յղանալ նման յանցապարտ միտք:

Օրջոնիկիձէն մէկ կողմը. ի՞նչ վերաբերմունք է ցոյց տուել ազգակից Ջաւախեցու պահանջի հանդէպ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը:

Ահա թէ ի՛նչ է ասել, մօտաւորապէս, Հայաստանի այն ժամանակուայ վարչապետ Համբարձումեանը. նա, որ դեռ համարւում է «ազգայնական» եւ իր այդ «մեղքի» համար էլ աթոռազուրկ է դարձել Մոսկուայի ու Թիֆլիսի հրամանով:

«Վե՛ր կացէք եւ գնացէք (չասելու համար՝ կորէ՛ք) ձեր տները. կոմունիստ կուսակցութիւնը (փոխանակ ուղղակի ասելու՝ Մոսկուան) գիտէ՛, թէ ո՛ւմ եւ ե՛րբ պէտք է տալ ինքնավարութիւն»:

Ահա իմաստը այն սաստիչ խօսքի, որ բոլշեւիկների հայ մարզպանը նետել է Ջաւախքի հայ գիւղացիութեան երեսին:

Այժմ դէ բաղդատեցէք իրար հետ այդ երկու բոլշեւիկներին — վրացի Օրջոնիկիձէին եւ հայ Համբարձումեանին: Բայց մի՞թէ բաղդատել կարելի է անբաղդատելի մեծութիւնները:

Թո՛ղ Ախալքալաքը չարունակի մնալ ընդհանրապէս ամենախեղճ գաւառը Վրաստանի, թող նա մշակութապէս լինի ամենայետինը, թող այնտեղ շատ աւելի պակաս դպրոցներ բացուին ու պահուին, քան Վրաստանի ուրիշ գաւառում, թող վրացի չինովնիկները «կառավարեն» հայկական Ջաւախքը. աւելին դեռ. թո՛ղ նոյն այդ չինովնիկները հողաբաժանութիւնը *այնտեղ կատարեն աչառու կերպով — այն պատճառով, որ վրացի Օրջոնիկիձէներն անգամ ուրանալ չկարենան այդ,— թո՛ղ զրկեն Ջաւախեցի հային ու նախապատուութիւն տան վրացուն,— ո՞ւմ հոգն է այդ ամէնը: Ստալինների եւ Օրջոնիկիձէների՞ թէ՞ նրանց հայաբարբառ Թութակների: Չէ՞ որ, վերջ ի վերջոյ, բոլշեւիկ վրացիներն եւս նոյն հիմնական նպատակին են ձգտում, ինչ որ մենշեւիկները եւ աջակողմեանները — հողային, մշակութային, եւ վարչական այնպիսի քաղաքականութիւն վարելով Ջաւախքում, որ վերջինս երազում իսկ մոռանայ Հայաստանին միանալու մտմտուքը: Չէ՞ որ Վրաստանին պէտք է Ախալքալաքի հացը, վրացի խաշնարածին էլ՝ նրա սիգաւէտ արօտները: Եւ յետոյ՝* Վրաստանի բնակչութեան աւելցուկին *հո՛ղ է պէտք. ուրեմն հողային ֆոնդ կարելի է եւ պէտք է ստեղծել Ջաւախքում: Կրկնակի նպատակով. մէկ՝ տեղացի հային անտեսապէս խեղճ պահելու նկատումով — գուցէ թէ դա պատճառ լինի, որ նա ստիպուած լինի գաղթելու. մէկ էլ նրա համար, որ Ջաւախքում վրացի տարրը ուժեղանայ, որով եւ ինքնին ու վերջնապէս «լուծուի» Ախալքալաքի խնդիրը:*

Վրացի վարիչներից շատերը չեն էլ ծածկում, երբեմնապէս բացայայտօրէն ասելու իրենց այդ միտքը — Ջաւախքը պէտք է իրենց եւ իրենց խաշների համար, նա պէտք է վրացական գաղթարնակեցման (կօլոնիզացիա) համար:

Ջաւախքի հայութիւնը կը գտնի, ի հարկէ, այդ ամէնի դիմադրաւելու միջոցը: Նրա եւ առհասարակ ամբողջ հայութեան, անօրինակ աճեցումը կարճ ժամանակուայ ընթացքում յօդս կը ցնդեցնէ վրաց կօլօնիզատորական ծրագիրները: Եւ յետոյ, զարգացնելով իր